ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
2019 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

ԲԱԺԻՆ 1. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2019թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը 3

ԲԱԺԻՆ 2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները 4

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները 4

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները 6

ԲԱԺԻՆ 3. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները 6

ԲԱԺԻՆ 4. Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 8

4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը 8

4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 9

Եզրակացություններ 10

Հղումներ օգտագործված նյութերին 11

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2020 թվականի աշխատանքային ծրագրի 23-րդ կետի և արտացոլում է «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ ընկերություն) 2019 թվականի ներդրումային ծրագրի [Որոշում 2] (այսուհետև՝ ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է հաշվի առնելով «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի ներդրումային ծրագիրը և փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին վերջինիս կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվությունը [Հաշվետվություն]:

ԲԱԺԻՆ 1.
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2019 թվականի տարեկան ներդրումային ծրագիրն ուղղված էր ՀԷԿ-երի անվտանգության, արդիականացման և հետագա բնականոն գործունեության ապահովմանը: Մասնավորապես՝ ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր իրականացնել 58,0[1] մլն դրամ ներդրումներ՝ անվտանգության համակարգի արդիականացման, ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների, տնտեսական բնույթի սարքավորումների, լիցենզավորված ծրագրերով համալրված համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների, գրասենյակային կահույքի, հսկիչ-չափիչ սարքավորումների և գործիքների ձեռքբերման ուղղությամբ:

[1]Սույն վերլուծական տեղեկանքում բոլոր գումարները ներկայացված են առանց ԱԱՀ:

Ներդրումների զգալի մասը՝ 23,7 մլն դրամ, նախատեսվում էր ուղղել անվտանգության համակարգի արդիականացմանը, ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերմանը՝ 13,6 մլն դրամ, իսկ հսկիչ-չափիչ սարքավորումների և գործիքների ձեռքբերմանը նախատեսվում էր ուղղել 15,7 մլն դրամ: Լիցենզավորված ծրագրերով համալրված համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերման համար նախատեսված էր 2,9 մլն դրամ:

Համաձայնեցված ներդրումներից 2,2 մլն դրամը նախատեսված էր տնտեսական բնույթի սարքավորումների, գրասենյակային կահույքի և բջջային հեռախոսների ձեռքբերման նպատակով:

ԲԱԺԻՆ 2.
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն Հաշվետվության՝ ընկերությունը 2019 թվականի ընթացքում իրականացրել է 41,2 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում շահագործման են հանձնավել 26,3 մլն դրամի ներդրումներ: Մնացած 14,9 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ: Հարկ է նշել, որ Հաշվետվությամբ ներկայացված ավարտված ծավալներում ներառված է նաև անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով 3,9 մլն դրամի ներդրումներ՝ «Արգել» ՀԷԿ-ում վթարի հետևանքով կայանի վարչական շենքը սնող տրանսֆորմատորը նորով փոխարինելու վերաբերյալ, որոնք ամբողջությամբ հանձնվել են շահագործման:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի իրականացված և ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

հ/հ	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեց-ված ներդրումների կանխատեսվող ծավալը	Փաստացի իրականաց-ված՝ ավարտված ներդրումներ	Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված		
					2019թ.	2019թ. սկզբի դրու-թյամբ (մնացորդ)	Ընդամենը
		մլն դրամ	մլն դրամ	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8
1	**Այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ**	58,0	22,4	39%	37,3	-	37,3
1.1	Անվտանգության համակարգերի տեղադրում	23,7	4,2	18%	4,2	-	4,2
1.2	ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում	13,6	4,5	33%	19,4	-	19,4
1.3	Տնտեսական բնույթի սարքավորումների ձեռքբերում	0,9	1,3	150%	1,3	-	1,3
1.4	Լիցենզավորված ծրագրերով համալրված համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում	2,9	3,0	104%	3,0	-	3,0
1.5	Գրասենյակային կահույքի ձեռքբերում	1,0	0,8	78%	0,8	-	0,8
1.6	Հսկիչ-չափիչ սարքավորումների և գործիքների ձեռքբերում	15,7	7,7	49%	7,7	-	7,7
1.7	Բջջային հեռախոսների ձեռքբերում	0,3	0,9	319%	0,9	-	0,9
2	**Անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով կատարված ներդրումներ**		3,9		3,9		3,9

	Ընդամենը		26,3		41,2		41,2

Ինչպես կարելի է տեսնել Աղյուսակ 1-ից, ընկերությունը համաձայնեցված ներդրումային ծրագիրը կատարել է 39%-ով, ընդ որում տնտեսական բնույթի սարքավորումների, բջջային հեռախոսների ձեռքբերման ուղղությունները գերակատարվել են:

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

№	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված		Շահագործման հանձնված	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից	17,6	43%	17,6	67%
2	Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից	23,7	57%	8,8	33%
	ԸՆԴԱՄԵՆԸ	41,2		26,3	

ԲԱԺԻՆ 3.
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

Ստորև ներկայացված է ընկերության կողմից 2019 թվականին իրականացված ներդրումների ծավալը՝ հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

Ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով 2019 թվականին համաձայնեցված ներդրումային ծրագրի շրջանակում աշխատանքներ են իրականացվել հետևյալ ենթաուղղություններով.

«Անվտանգության համակարգի արդիականացման» ուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 23,7 մլն դրամ՝ անցագրային ռեժիմի անցակետերի տեղադրման և ընդհանուր տեսահսկման համակարգերի արդիականացման նպատակով: Հաշվետու ժամանակաշրջանում այս ուղղությամբ իրականավել են 4,8 մլն դրամի ներդրումներ:

«ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ» 2019 թվականին համաձայնեցված էր 13,6 մլն դրամ շարժիչների, պոմպերի, ներանցիչների, ամբարձիչների, վերհան հարթակների ձեռքբերման նպատակով: Հաշվետու ժամանակաշրջանում փաստացի ձեռք են բերվել 4,5 մլն դրամի պոմպեր և էլեկտրական ամբարձիչ:

«Տնտեսական բնույթի սարքավորումների ձեռքբերման ենթաուղղությամբ» համաձայնեցված էր 0,9 մլն դրամ: 2019 թվականին փաստացի ձեռք են բերվել 1,3 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Լիցենզավորված ծրագրերով համալրված համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում» ենթաուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր 2,8 մլն դրամ համապատասխան ծրագրերով հագեցած նոր համակարգիչների, համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերման նպատակով: Փաստացի ձեռք են բերվել 2,9 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Գրասենյակային կահույքի ձեռքբերում» 2019 թվականին համաձայնեցված էր 1,0 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել 0,8 մլն դրամ ընդհանուր արժեքով հիմնական միջոցներ:

«Հսկիչ-չափիչ սարքավորումների և գործիքների ձեռքբերման ուղղությամբ» 2019 թվականին համաձայնեցված էր 15,7 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել 7,7 մլն դրամի սարքավորումներ և գործիքներ, որոնց թվում՝ եռակցման սարքեր, կենտրոն, մեգոմետր և այլն:

«Բջջային հեռախոսների ձեռքբերման» ուղղությամբ 2019 թվականին համաձայնեցված էր շուրջ 270,0 հազ. դրամ: Հաշվետու տարում փաստացի ձեռք են բերվել 862,6 հազ. դրամի 4 հատ բջջային հեռախոսներ:

ԲԱԺԻՆ 4.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

2019 թվականի ընթացքում Ընկերության կողմից փաստացի ավարտված 26,3 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա են նվազեցման ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, մասնավորապես.

1. Հաշվետվության ուսումնասիրության արդյունքում 3,0 մլն դրամի ներդրումներ նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ ներդրումային ծրագրով նախապես համաձայնեցված չլինելու պատճառով, այդ թվում՝ կայծակից պաշտպանող սարքերի, գազի բալոններ, ծխային տվիչների տեղադրում, կրակմարիչներ, էլեկտրական ջրատաքացուցիչներ և այլն:
2. Իրականացվել է նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, հիդրոէլեկտրակայանների անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների, տնտեսական բնույթի սարքավորումների և բջջային հեռախոսների ձեռքբերման ենթաուղղությամբ իրականացված ներդրումները հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցել են 1,2 մլն դրամով, որը ևս նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

3. Հաշվի առնելով, որ լուծարված հիմնական միջոցներն այլևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, հիմնական միջոցի լուծարված արժեքը՝ 0,9 մլն դրամ՝ նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ Ընկերության կողմից 2019 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը ամփոփված է ստորև՝ աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի սակագնով փոխհատուցման ենթակա 2019 թվականի ներդրումների ծավալի ամփոփ վերլուծությունը

1	**Իրականացված ներդրումներ**	**41,2**
2	**Անավարտ աշխատանքներ**	**14,9**
3	**2019 թվականի ընթացքում շահագործման հանձնված աշխատանքներ**	**26,3**
4	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**5,1**
4.1	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումները գերազանցող ներդրումներ	1,2
4.2	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումներ	3,0
4.3	Լուծարված հիմնական միջոցներ	0,9
5	**2019 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումներ**	**21,2**

Եզրակացություններ

Ամփոփելով ընկերության ներդրումային գործունեության արդյունքները, նշենք, որ 2019 թվականին ներդրումային ծրագրով համաձայնեցված ծավալը իրականացվել է 39%-ով: Հաշվետու ժամանակահատվածում ավարտված ներդրումների ծավալը կազմել է 26,3 մլն դրամ, որից անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով ներդրումների ծավալը կազմում է 3,9 մլն դրամ:

2019 թվականին ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքների համաձայն իրականացված ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը կազմում է 21,2 մլն դրամ:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի №470Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին».
Որոշում 2 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի սեպտեմբերի 18-ի №352Ա որոշումը «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».
Հաշվետվություն -	«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 2019 թվականին փաստացի կատարված կապիտալացվող և ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումների վերաբերյալ ընկերության 2020 թվականի փետրվարի 28-ի №2/9-014 գրությամբ ներկայացված հաշվետվությունը: